«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Արշակունյաց 44

01 փետրվարի 2020 թ.
ժամը 12:00

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գրիգորյան
անդամներ՝ Դ. Սարդարյան
Հ.Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝Ս. Ավագյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

1. Հայտերի բացման մասին

## 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գրիգորյան

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1.Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2.Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորման մասին,
3. Գնման ընթացակարգի հայտերի ներկայացման և բացման մասին,
4.Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների գնահատման մասին,
5. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ,
6. ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով մրցույթի նիստի արդյունքների ամփոփման մասին,
7. Հանձնաժողովի հաջորդ նիստի վարման օրվա, ժամի և վայրի մասին:

## 2. ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով հայտարարված հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորման մասին

Ընդունել ի գիտություն որ՝

2.1 ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով հայտարարված հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:
Ընդունվել է որոշում՝ կողմ – 3(երեք), դեմ – 0:

## 3. ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով մրցույթի հայտերի ներկայացման և բացման մասին

3.1 Հայտերը թղթային եղանակով բացվել են 2020 թվականի փետրվարի 01-ին ժամը $12^{00}$-ին, ք.Երևան, Արշակունյաց 44 հասցեում:

3.2 Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակիցների անվանումները | Էլեկտրոնային փոստի հասցե |
|---|---|---|
| 1. | «Ֆոտոլուր» ՍՊԸ | photolur@gmail.com |

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3(երեք), դեմ – 0:

## 4. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների կազմման և բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության մասին.

4.1Մասնակցի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պահանջներին:
4.2Մասնակցի կողմից ներկայացված՝ բացված ծրարում առկա են հրավերով նախատեսված փաստաթղթերը:
4.3Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3(երեք), դեմ – 0:

## 5. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

5.1 Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են. (ՀՀ դրամ)

| Ծառայության անվանումը | | | | Մասնակիցների անվանումները և առաջարկած գները ըստ չափաբաժինների / Առանց ԱԱՀ / | | |
|---|---|---|---|---|---|---|
| Չ/Հ | Անվանումը | Չափման միավորը | Ընդհանուր քանակը | «Ֆոտոլուր» ՍՊԸ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | |
| | | | | Ինքնարժեք /տառերով և թվերով/ | Շահույթ /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
| 1 | Լուսանկարչական ծառայություններ | դրամ | 1 | 3 850 000 /երեք միլիոն ութ հարյուր հիսուն հազար/ | | 3 850 000 /երեք միլիոն ութ հարյուր հիսուն հազար/ |

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3(երեք), դեմ – 0:

## 6. ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով մրցույթի նիստի արդյունքների ամփոփման մասին

6.1 Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և սույն Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» կետի պահանջներով մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված մասնակցին էլեկտրոնային ձևով ծանուցել գնի նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3(երեք), դեմ – 0:

## 7.Հանձնաժողովի հաջորդ նիստի վարման օրվա, ժամի և վայրի մասին

7.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա սույն թվականի փետրվարի 06-ին ժամը $12^{00}$-ին, ք.Երևան, Արշակունյաց 44 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3(երեք), դեմ – 0:

Հանձնաժողովի՝

նախագահ՝ ____________ Ա.Գրիգորյան

անդամներ՝ ____________ Դ. Սարդարյան

____________ Հ.Սարգսյան

քարտուղար՝ ____________ Ս. Ավագյան